

ճանցածներն ու մեր բարեկամները չէ
ընտրած, ընտրութեանը չենք հաւնիր,
պակսութիւններ կը գտնենք: Տերու-
թեան մը կամ բոլոր աշխարհքիս մէջ
եղած բաներուն չենք հաւնիր, ընող-
ները կը բամբասենք ու կը մեղադրենք.
ինչո՞ւ. վասն զի եղածները մեր ուղա-
ծին կամ մեր շահուն յարմար չեն գար:
Եւ թէպէտ մենք բոլոր աշխարհքիս
նայելով՝ աւազի հատ մ'ալ չենք, բայց
իբրեւ թէ այն մեծ ու ընդարձակ մեքե-
նան կառավարողը մենք ենք՝ ուղած-
նուս պէս կ'ուզենք շարժել: Իրագիր
կարգացողներուն մէկը ատեն մը լրա-
գրաց մէջ իրեն խելքին ու կարծեացը
դէմբաներ կարդալով՝ կ'ըսէ օր մը նե-
ղանալով. « Ես ինչ խելք է այս մեր
թագաւորին խելքը. թէ որ դեռ այդ
խելքով պիտի երթայ, ես ալ իրեն բա-
նին չեմ խառնուիր », քովը կեցողնե-
րը խնտալ սկսան իրեն վրայ, ինքն իր
խելքին հաւնելով՝ ձգեց լրագիրը ու
առաւ քալեց:

(ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Տեսութեանք 'ի Լատին յարբառ, և որ ինչ 'ի
վարժից նորին շահ:

Եւ ինչ եւրոպացիք բարգաւաճեալք
յամենայն ազգի ազգի գիտութիւնս,
և որոց ոչ պակասեն մատենանք յիւ-
րեանց բարբառ, սակայն դարձեալ այս-
չափ կարեւոր համարին զուսուսմն լատին
բարբառոյ: Թերեւս ասիցէ որ, թէ զի
լեզուաց եւրոպականաց մայր գոլով լա-
տինականն, կարեւոր է նոցա ուսումն
նորին առ 'ի ներհուն տեղեկութիւն
բնիկ իւրեանց բարբառոյն: Եւս պա-
տասխանի իրաւացի է, այլ ոչ բաւա-
կան. զի բանասիրաց նոցա երկրորդ
փոյթ է նիւթական կազմութիւն շա-
րագրութեանն. և է իսկ հնար քաջ
շարադրել 'ի բնիկ բարբառ՝ առանց գի-

տելոյ զլատինականն: Եւս երիցագոյն
փոյթ և խնամ նոցա է 'ի կրթել զիմա-
յականն և 'ի ճգրտել զբացատրու-
թիւնս նորին. և առ այս անհրաժեշտ
կարեւոր համարին նոքա զլատին բար-
բառ, մինչև ընդ ուսմունս կարեւորս
մարդկութեան դասել զայն, որպէս
կատարումն ազնուականագոյն զօրու-
թեանց իմացականիս՝ ճգրտել զիւր-
հուրդս մտաց, և զբարբառ՝ որ պատ-
կեր է նոցին:

Իտք մեր կրթին յեղանակ մտա-
ծութեան հնոց յոյն և լատին օրինա-
կագիր մատենագրաց յուսանել զբար-
բառ նոցա, որպէս մանուկ յուսանել
զմայրենի բարբառ իւր՝ կրթի յեղանակ
մտածութեան ծնողացն: Եւ ինչ ճշ-
դութիւն և ճգրտութիւն իմաստից 'ի
լեզուի մերում տեսանի, առաւելագոյն
մասամբ արգասիք են թարգմանու-
թեանցն՝ զորս նախնիք մեր 'ի վերայ
քաջաց հելլեն մատենագրացն արարին.
և յայտնի իսկ երեւի այս ճգրտութիւն
'ի յունագէտ մատենագրաց մերոց գիրս,
որ յոյժ զանազանին յանյունագիտացն:
Եւս բարեկացին մեր գերահանձար եթէ
գիտէր զհելլեն բարբառ, ազատք գտա-
նէին քերթուածք նորա յասիական յոր-
դութեանց, և դիւրիմացք ևս ճգրտու-
թեամբ իմաստիցն լինէին: Յառաջ
քան զամս սակաւս որ միանգամ յազ-
գայնոցս գրէր ինչ, իմաստք գրուածոց
նորա ոչ ինչ աւելի քան զմայրենի աշ-
խարհիկ բարբառոյն իմաստս 'ի վեր
ամբառնային: Եւս յետ գաղղիականին
մտանելոյ 'ի մերազնեայս, եղանակ
դպրութեան նոցա 'ի նոյն այլակերպե-
ցաւ: Եւս ուրեմն և 'ի գրուածս ուսու-
ղաց լատինականին՝ մտցեն նորին տիպք
բանից և եղանակ ճգրիտ և վսեմ մը-
տածութեան և իմաստից:

Եւս յայտնի ճմարտութեան դը-
ժուարանան հասու լինել՝ որք միան-
գամ 'ի վարժս լեզուաց զնիւթական
բառս և եթ սովոր են նկատել: Զիք
երկբայել զի որեար անկիրթ և ապուշ
ոչ ինչ օգտի 'ի նիւթական ուսմանէ լե-
զուաց. այլ կիրթ և խորագնին միտք

նկատեն զհամեմատութիւն բառից ընդ խորհուրդս և ընդ իմաստս մտաց, և տակաւ զմեծ և զխորին ներդաշնակութիւն նոցին ընդ իրեարս : Ի մատչել ուրուք զառաջինն յընթերցումն քաջաց վիպասանից, ճարտարախօսաց, բանաստեղծից, թատերգիակ և դիւցազնեղքքերթողաց, երգիծաբանից և իմաստասիրաց, քանի ազգի ազգի պատկերք ճարտարանկարք ոչ ճոխացուցանիցեն զմիտս նորա. անդ ամենայն զօրութիւնք հոգւոյն կազդուրին և բեղնաւորին. զօրանայ իմացականն, ճշգրտի դատողականն, կրթին ախորժակք, ուսանի մտանել 'ի խորս և տրամաբանել. երեւակայութիւն նորա և զգացումն, եռանդն և զեղումն սրտի և կամք, ամենայն ինչ զարգանան :

Ի այց թէպէտ և այս ամենայն յաջողէ 'ի վերծանել զմատենագիրս որ և իցէ գիտնաւոր և բարգաւաճեալ ազգաց, այլ փորձ նոցին իսկ ազգաց և միաբան հաւանութիւն իմաստնոց նոցին՝ ոչ վայրապար նախամեծար քան զայլս ընտրեաց զլատին բարբառոյ մատենագիրս, վասն գերազանց բարեմասնութեանց նորա : Բզդուութիւն նորա և ճշգրտութիւն բացատրութեանցն վկայեալ են յամենայն գիտնոց. ինքնազարդ պարզութիւն նորա, հուժկու պարբերութիւնք, և գնացք վայելուչ՝ ընծայեն նմա վեհ իմն և վեմ կերպարանս 'ի վերքան զայլոց լեզուաց, հանդերձ ծանր և լուրջ ներդաշնակութեամբ : Իմն յարդի մատենագրաց ասէ. “ Զիք ինչ համեմատ մեծավայելուչ վսեմութեան լատին բարբառոյ. հռովմէական ազգն նախիշխան տիեզերաց՝ որ նովաւն բարբառէր, տպաւորեաց 'ի նմա զնկարագիր մեծութեան իւրոյ ” :

Եւ այս վսեմութիւն և այս ճշգրտութիւն լատին բարբառոյ, որով այնքան հանձարք մեծամեծք խորհեցան և գրեցին, անմահացոյց զբարբառն զայն. և յետ բարգաւաճելոյ ևս դստերաց նորա իտալականին և գաղղիականին՝ տակաւին կեայ նա և կեցցէ յաւերժ, անդէն իսկ 'ի մահուն կենդանի մնացեալ միշտ,

և նոցին իսկ մատենագրաց Իտալացւոց և Վաղղիացւոց տայ տիպս բանից՝ ազդոյ և գեղեցիկ, և բացատրութիւնս աշխոյժս և հիացականս : Իբր ոչ եթէ զոճ լատինական յիւրեանցն բարբառ մուծանելով, քանզի զհանձար լեզուաց իւրաքանչիւր պարտ է պահել անեղծ. այլ սովին և եթ կարեւոր զգուշութեամբ մարթ է առնուլ նոցա յիրերաց 'ի փոխ զճշգրտութիւն, զվսեմութիւն, զազդուութիւն, զչնորհս, զաշխոյժս և զայլ ամենայն բարեմասնութիւնս : Իսկ սին, որոյ բացատրութիւնք և տիպք բանից այնպէս կատարեալք են և քաջութեամբ, յորդորէր զորդի իւր անդադար՝ պարապել 'ի վերծանութիւն լատին մատենագրաց, և գրէ առ նա 'ի միում ուրեք 'ի թղթոցն. “ Զաւուրս՝ յորս չերթաս 'ի վարժարան՝ ընթերցիր զՎիկերոն, և նորոգեա 'ի մտի զհատուածս Որատեայ և զԼիրգիլեայ. զի մատենագիրքս այսոքիկ ուսուցեն քեզ խորհել և գրել ճշգրիտ և անտխեղծ ” : Եւ պահի օրինակ մի տաղիցն Որատեայ ընծանօթութեամբք 'ի լուսանցսն, որովք նա ինքն Իսահան Նշանակէ զդարձուածս և զբացատրութիւնս բանիցքերթողին՝ պատկանաւորս 'ի բարբառ գաղղիական : Եւ որ ինչ Պոսիւէի և Ֆենելոնի 'ի Լիրգիլեայ ընկալեալ տիպս բանից, և որ ինչ Լա Պրիյէրի և Լա Ֆոնդէնի 'ի Վեդրեայ՝ քաջայայտ է գիտնոց :

Եւ յս ճշգրտութիւն ոճոյ պանծացոյց զլատին մատենագիրս, և հան գնուա 'ի ճակատ մատենագրացն Հելլենաց. որում քաջ հասու լեալ և ախոյեան կաջեալ առակախօսն Վեդրոս, առ 'ի յորդորել զիւրսն 'ի նոյն նմանութիւն՝ ասէ ուրեք 'ի վերջաբանս իւր .

Եթ զվաստակ իմ յարգեսցէ Լատինս,
Հանցէ յոգունս ընդդէմ Յունաց 'ի ճակատ :

Որովք քաջայայտ առնէ՝ զի ոչ զլատին բարբառոյ է խնդիրն, զի այսուիկ չերմարթ Լատինաց պայքարել ընդ Հելլենոս, այլ զճշգրիտ բացատրութեանց և զճիշդ և վայելուչ արտադրութեան խորհրդոց, զորս ամենայն այլ և այլ

լեզուաց օրէն է 'ի փոխ առնուլ . և որոց նմանութիւն՝ գեղ մեծ յաւելուցու 'ի հայկականս բանասիրութիւն , և կրթութեացէ յոյժ զասիական ախորժակս : Ասան որոյ ընթերցումն ճարտար թարգմանութեց լատին մատենագրաց կարեւոր է մերազնեայ բանասիրաց , այլ ոչ այնպէս օգտակար՝ որպէս զուսումն լատին բարբառոյ , որով կարող լիցին զքնագիրսն վերծանել . իսկ օգտակարագոյն յոյժ որոյ 'ի թարգմանութիւն քաջաց մատենագրաց նոցին պարապիցեն . քանզի սրէ զուշ և զուրուշ 'ի նմանութիւն բնագրին , և տայ թարգմանչին ըստ նմին օրինակի յերկրել զձևս բացատրութեանցն , որպէս մանկան տղայոյ ըստ մայրենի ձևոյ խօսիցն :

Եւ յամ զանազանութեան կերպարանաց բանից յոճոյ նիւթական լեզուին ոչ միտ եղեալ նորոց թարգմանչաց ազգիս , մանաւանդ երկոցունց յետին դարուցս , զամենայն ճիգն իւրեանց եղին 'ի նմանութիւն նիւթական լեզուին , որով աղաւաղեցին զհայկազեանս բարբառ , հրէշ իմն այլանդակ ստեղծեալ խառն յերկուց լեզուաց՝ 'ի լատինականէն և 'ի մերմէս , 'ի խորշումն լսելեաց և 'ի զզուումն կիրթ ախորժակաց : Եւ զոր օրինակ ամենայն ախտք և մոլութիւնք երթան և զայրանան , այսպէս և զակատումն նոցա 'ի նիւթական նմանութիւն լատին բարբառոյ : Օր 'ի սկզբան անդ առին 'ի լատինականէն զհամաձայնութիւնս ածականաց ըստ սեռի , ըստ թուոյ և ըստ հոլովոյ . զոր օրինակ Մեղաւորութեայ Մաքրադէնայոցն . — Զօրէն քնով անապուհայ սիրելագոհեղի՝ Դանուդի զմանուկի էւր . — Այսպէս նեայ ներշնչանայ . — Զմեղս Գոյս , և այլն :

Ըստ սմին օրինակի ընկալան նիւթապէս և զկրաւորական և զներգործական ընդունելութիւնս , զոր օրինակ Գոհեցեալ 'ի թշնամեայ իմոյ . — Համապագեցեալ 'ի Բաղմամասնեայ Գոյսի . — Ընդունեցեալ յանդրաս հեղաթեւէն իմի . — Ի մարդոց անարթանից կենի զարհուրեւեալ պատկառ զարեւոյցեալ . — Եղով միայնոյն անհեռի՝ Կէ ոչ անի զվերանգնեցող զինքն :

Եւ յսպէս և զանեղական անուանս եզականացունցին առ 'ի յարմարել ըստ լատինականին , և զանյոգնականս յոգնականացունցին , զոր օրինակ Զելանօղն 'ի կենի յայմանէ . — Արի 'ի յարհաւրել Դժոխոյ . — Փափագանա Գոյոյ կեցումնեան . — Գիրգ՝ որ կոչի առաջնորդ կենի յաւորենալանի . — Ունկամբ արարի Բեկեցելոյ . — Ի պահասումնէն ուժից . — Ի յոսից իմոյ սարարեցեալ . — Սիրով Վարակեցեալ . — Ի հանդերձեալ հոգս Դժոխոյ :

Եւ ոչ աստ զկայ առեալ , զնոսին իսկ զյատկութիւնս լատինական ոճոյ մուծին 'ի հայ , զոր օրինակ Եթէ Դոհամագործել կամեցէր ասորոսծայնոյ զնորհաց . — Ի մեանելոցն 'ի Գաղղե ողորմեցա . — Մինչ որեմն սորա այսպէս անին զինքեան . — Ահա արի Գեղ հրաման , այսոս ասկայն արդարեղի՝ օրինի . — Հարց զմեանելոցն Եթ զինչ զգայեց զառանցելոյ յիւրոյն զկենի . և այլ այսպիսի կերպարանք բանից անհանգուրժելիք հայեցի ունկան :

Իսկ զնիւթական թարգմանութիւնս բառից թողում յիշատակել . զի զmagnopere թարգմանեցին մեծերապէս , զmanuductio քեռածոթեան , զsatisfactio Բաարարութեան , զtergiversare Երկասարանդել : Եւ որ այլանդակ ևսն է՝ զabusare թարգմանեցին ապավարել , զillustre Վեհալուսոր , զledere լեւել , և սոցին նման ճիւղաղք խառնազազանք յերկուց լեզուաց բաղկացեալ :

Եւ ապա սովին ցնորիւք ջերմացեալ միտք , սկսան հանձարել զնմանօրինակ ճիւղաղք 'ի սպառօպուռ եղծումն հայկական բարբառոյս . մինչև զԲաւիղ կուլել անկարելոյ , և ասել յոգնականաբար . Զորք եղեն անկարելլոնք մանաւանդակն , փոխանակ ասելոյ . Զորք եղեն գլխաւորք 'ի բաւղաց . զԿաւառ կամ զԿարաս կուլել զոգեղենակ . և այսպիսի անճոռնի կազմութեամբ բառից կամել զնախնեաց բառս և զգրութիւնս աղաւաղել : Եւ ատ լիցի 'ի հաստատութիւն բանիցս այսր 'ի ներքս ածել զմի 'ի մեկնութեանց , զոր թարգմանիչ մատենին մակազրելոյ յիւրմէ Զեռածոթեան յեռու

յետկոյս գրոցն . Արքեան , արքեան .
անուան , անուան . Վերջնագոյն ճանաչ-
ողոյն՝ որ ճանաչ ալայ վերադառնի , ծածկեցեալ
հերոս հարձակոսութեամբ՝ պահպանութեան ստի-
անանցն ընդդէմ իրացն այնոցիկ , որք 'ի վե-
րոսոս ներանկանիլ հարեն : 'Եւ այսմ սակայն
գիտելի է զմոլորութեան գրչաց , որք փոխա-
նայ գրելոյ արքեան՝ անհրաժեշտ գրե-
ցին արքեան , որ է Խո ընդդէմ արհեստի
հերկողանի :

{ Եւ այս ծայր աղաւաղութեան հա-
սեալ էր հայկազնեանս բարբառ 'ի ժա-
մանակի՝ յորժամ սկսաւ Սիսիթար հան-
դերձ իւրովքն նորոգել զայն , և 'ի նա-
խատիպ գեղեցկութիւնն դարձուցա-
նել : 'Այլ յոյժ դժուարին է բժշկել
զվերս առանց սպեաց , և դուն ուրեք
'ի բորոյ և 'ի ծաղկոյ անտխեղծ մնան
դէմք : 'Այսպիսի սպիւք ոչ միայն 'ի լա-
տինականին նիւթական թարգմանու-
թենէ , այլ և 'ի յունականէն իսկ դեռ
ևս մնան 'ի մերում լեզուիս , որ խորա-
զնին աչաց և եթ գան 'ի տեսիլ . և ներ-
հուն հմտութեան պէտք են առ 'ի զա-
նազանելոյ զհայկաբանութիւն 'ի հել-
լենաբանութենէ և 'ի լատինաբանու-
թենէ , և թէ որ եղանակ բանից ըն-
կալեալ 'ի նոցանէ չստնանիցէ մերումս
բարբառոյ : { Եւ ճախ ընթերցումն քա-
ջաց մատենադրացն մերոց՝ վեհագոյն
վարժապետ լիցի մեծիս այսմիկ և դը-
ժուարին կրթութեան :

*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՏԱՐՈՒԹԻՒՆ

կար և անոր գործածութեանցը վրայ :

Եւ թը այնպիսի սննդարար ու օգ-
տակար գոյացութիւն մըն է , որ ամէն
տեղ մարդուս առօրեայ պիտոյիցը հա-
մար ասկէց աւելի գործածական բան
չկայ , մանաւանդ որ իր կերպ կերպ վի-
ճակի փոփոխութեամբը՝ շատ տեսակ
գործածութեանց մէջ կը մտնէ . անոր

համար երկրագործական շահավաճա-
ռին մէջ մէկ մեծ ճիւղ մըն է կաթի
առւտուրը , որով երկրագործութեան
արդար ու միանգամայն առատ վաստա-
կովն իրեն շահին դուռ բացողը՝ եթէ
այս մասին ալ ըստ օրինի մտադիր ըլլայ ,
անտարակոյս շատ աւելի արգասաւոր
կ'ըլլայ իր աշխատութիւնը : 'Այդ մենք
ալ ուզելով մեր կողմանէ դիւրութիւն
մը ընծայել մեր այն ազգայնոց , որ մաւ-
նաւոր կերպով սէր ու փոյթ ունին եր-
կրագործութեան օգտակարարութեան
և միանգամայն անոր կանոնաւոր գոր-
ծադրութեանը կը փափաքին ու կը ջա-
նան , կարգաւ դիւրիմաց և քիչ մը ըն-
դարձակ ոճով հետ զհետէ կը խօսինք
ընդհանուր կաթի և կաթնեղէն գոյա-
ցութեանց վրայ՝ իրեք մաս բաժնելով
մեր խօսակցութիւնը , առջինին մէջ
պարզ կաթի վրայ խօսելով , երկրորդին
մէջ կարագ շինելու կերպին վրայ , և
երրորդին մէջ պանրոյ վրայ :

Ընդհանուր գիտելիք :

Եւ թը կաթնէն վերջը մասնաւոր տեղ
մը կը դնեն , որ Կաթնաբան կ'ըսուի , ու
հոն կը պահեն՝ մինչև որ հարկ ըլլայ
իրըն պարզ կաթ գործածել , և կամ
թէ որ կարագ ու պանիր շինելու դիտա-
ւորութեամբ դրուած է՝ մինչև որ մա-
սունքը իրարմէ բաժնուին :

Եւ որովհետեւ կաթը այլ և այլ կերպ
փոխուելով՝ այլ և այլ գոյացութիւն կը
դառնայ , և ըստ այնմ ալ աժէքը կը փո-
խուի , և այս աժէքն ալ միշտ ու ամէն
տեղ նոյն չէ , հապա ըստ տեղւոյն ու
ըստ ժամանակին փոփոխական է , ա-
նոր համար երկրագործը պիտի նայի որ
ինչ կերպով իրեն աւելի շահաւոր կ'իյ-
նայ , արդեօք պարզ կաթը ծախելով՝ չէ
նէ կարագ ու պանիր շինելով : 'Նոնք ,
որ քաղաքներու քով տեղ կը բնակին՝
շատ շահաւոր կ'ըլլեն , թէ որ պարզ
կաթ և կամ թէ կաթին երեսէն ժող-
վուած պարարտ սերը ծախելու ըլլան .
իսկ անոնք , որ քաղաքներէ աւելի
հեռու տեղ կը բնակին և շաբթուն